



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԼ 3

ԱՍՏՈՒԾՈՅ ՎՍՏԱՅԷ
ԱՆ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԿՕԳՆԷ

(Թ.Ա.Բ.Գ.Մ.)



ՏՊԱՐԱՆ ԳՈՒԼԵՃ
ՀԱԼԷՊ

1017

ԱՍՏՈՅԾՈՅ ՎՍՏԱՀԷ

ԱՆ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՁ ԿՕԳՆԷ

(Ազգայնագիտական Գերմաներեն)



«Ան անդրեան օրը ինձի կանչե, ես քեզ պիտի
ազատեմ, ու դուն զիս պիտի փառաւորես»:
Սաղմ. 50. 15:

Երիտասարդ մը որ Աստուածաբանութիւն
ուսանելու մեծ փափաք ունէր՝ հիւանդու-
թեան պատճառով չյաջողեցաւ ճիշդ ժամա-
նակին իր ուսման հետեւիլ: 1817ին վերջապէս
կրցաւ համալսարան մտնել, սակայն այդ տա-
րին սովի տարի մըն էր ու երիտասարդին ու-
նեցած գրամը շուտով սպառեցաւ: Անոր աղ-
քատութիւնը հարկաւ զայն շատ մը երիտա-
սարգական փորձութիւններէ զերծ և Աստու-
ծոյ շատ մօտ պահեց: Հետեւեալ քանի
դէպքերը մեզի պիտի ցուցնեն թէ ինչպէս:

Եղաւ ժամանակ մը որ չկրցաւ շարաթէ շարաթ իր կերակուրի դրամը վճարել և քանի մը շարաթուան պարտք մը դոյացաւ: Իր պարտատէրները փափկօրէն իրեն հասկցուցին թէ եթէ մինչև յաջորդ երկուշարթին չի վճարեր, պիտի չկրնային այլևս իրեն կերակուր տալ: Երկուշարթին եկաւ, դրամ ձեռք ձգելու անոր բոլոր ջանքերը ի դերև ելած էին: Փոխանակ նախաճաշի երթալու մեր երիտասարդ ուսանողը երգ մը երգեց և քաջալերուեցաւ: Ժամը 9ին ատենները երգին ազդեցութիւնը անդամ էր և անիկա իր հին գէնքին, աղօթքի գիմեց:

Հագիւ թէ աղօթքի սկսած էր երբ իր սենեակին գոյք բախուեցաւ: Ազնուականի մը ծառան էր որ եկած էր երիտասարդ ուսանողին ըսելու թէ իր տէրը զայն ժամը 1ին տեսնել կ'օգտէր: Երիտասարդը անմիջապէս սկսաւ երթալու պատրաստուիլ: Իր կօշիկները ներկած միջոցին սակայն տեսաւ թէ ծակ էին և քանի որ նոր գոյք մը գնելու դրամ չունէր, գուլպաներն ալ կօշիկին գոյն ներկեց սրբիսգի ծակերը շատ յայտնի չընէին: Ազնուական պարոնը երիտասարդին գործ մը տեսաւ որով ան օրական 2-3 ժամ պիտի զբաղէր կարգ մը շարաթներու տեղուլի սմբ

ԱՅՍՏՈՒԾՈՅ
ՀՍՄՐ

1-1017 աւ
ԱՅ

և լինալուն լաւ պիտի վճարուէր: Երբ երիտասարդը շնորհակալութեամբ պիտի մեկնէր, անոր ձեռքը սակի մը դրաւ իբրև նախավճար: Որքան մեծ եղաւ անոր ուրախութիւնը: Անմիջապէս իր պարտատէրներուն երթալով ոսկին անոնց ձեռքը դրաւ: Անոնք սակին տեսնելով չէ թէ միայն զայն կրկին ընդունեցին, այլ անոր թուլատրեցին անկէ վերջ 3 ամիսն անդամ մը վճարել իր կերակուրին համար, քանզի խորհեցան թէ մէկ ոսկի ունեցողը աւելի ալ կ'ունենայ:

Շատ չանցած մեր երիտասարդ ուսանողին կօշիկները այնքան ողորմելի վիճակի մը մէջ էին, որ ստիպուած էր կօշիկակարին երթալ: Կօշիկակարը խոստացաւ, որ բաւական ցած գնով գոյք մը կօշիկ կարել և հիները կարկտել, սակայն միմիայն անմիջական վճարման փոխարէն: Կօշիկին լինալուն ժամանակը կը մօտենար, սակայն խեղճ ուսանողը տակաւին դրամ չունէր: Սենեակէն դուրս ելաւ բացօդեայ, առանձին տեղ մը երթալու և հոն իր խնդիրը Աստուծոյ մատուցանելու: Սակայն իր փրօֆէսորներէն մին իրեն հանդիպելով զայն իր սենեակը հրաւիրեց: Անրբ դուք ուսանելու եկաք, ինձմէ խորհուրդ հարցուցիք ձեր դասին մասին և ես ձեզի թելադ-

րեցի Յուճարէն Նոր կտակարանէն երբեմն Լատիններէնի թարգմանել. և ուստի պիտի չբարկանաք երբ ձեզի հարցնեմ թէ այս խորհուրդիս հետեւեցա՞ք», ըսաւ փրօֆէսորը և Յուճարէն Նոր կտակարանը ուսանողին երկնցուց: Ուսանողը յանկարծակիի եկաւ և վախցաւ թէ պիտի չլիքնար թարգմանել, սակայն երբ ուսուցչապետը դիւրին գլուխ մը բացաւ զոր ինք շատ չանցած իրաւ թարգմանած ալ էր, սիրտը հանդարտեցաւ: Փրօֆէսորը գոհ մնաց անոր աշխատէնքէն և անոր ձեռքը փոքր գումար մը ղնէլով ըսաւ որ այդ գրամով իրեն գիրք մը գնէր: Ուսանողը յուզուած՝ «Պին. Փրօֆէսոր, Աստուած ձեզ իբրև հրեշտակ գործածեց ինձի հաշար», ըսաւ իր սրտազին շնորհակալութիւնը անոր յայտնելով, բայց փրօֆէսորը չուզելով անոր երախտագիտական արտայայտութիւնները լսել, հայրական ակնարկ մը նետելով անոր վրայ՝ զայն փափկութեամբ հեռացուց իր քովէն: Երբ աշակերտը իր սենեակը վերադարձաւ, կօշիակարը իր կօշիկներով դրան առջև գտաւ: Ուսանողը զրպանէն հանեց փրօֆէսորին տուած գրամը և ահա ճիշդ իր կօշիկներուն գինն էր: Կօշիակարը այնքան ուրախացաւ գրամը անմիջապէս ստանալուն համար որ անոր խոստա-

ցաւ անկէ վերջ աւելի երկար ժամանակ տար վճարելու:

Մեր երիտասարդ ուսանողը յաջողեցաւ նաև կարգ մը աշակերտներու առանձին դասեր աւանդել ու այդ կերպով քիչ մը դրամ շինել: Երբ առաջին վճարումը ստացաւ այդ դասերէն՝ իր ուրախութիւնը վայելելու համար գուրո ելաւ: Ճամբան հանդիպեցաւ անոր մայր մը նիհար, տոգոյն և դալիահար որ իր անզօր ու տկար երկու զաւակներուն հետ դուրս ելած էր դաշտին խոտով իրենց անօթութիւնը յաղցնելու: Ուսանողը այնքան ազգուեցաւ անոնց երեւոյթէն որ առանց հարցումներ ընելու իր ունեցած ամբողջ գրամը անոնց տուաւ ու հեռացաւ: Սակայն քիչ վերջը խորհեցաւ թէ արդեօք իր ըրածը չիտա՞հ էր: Աւելի ազէկ չէ՞ր որ դոնէ գրամին կէսը անոնց տար: Բայց սենեակը վերադառնալուն ի՞նչ տեսնէ սեղանին վրայ, ճիշդ այնքան գրամ որ ինք այն աղքատ մօրը եւ իր զաւակներուն տուած էր: Երբէք չիմացաւ թէ այդ գրամը որմէ՞ եկած էր կամ հոն գնողը ի՞նչպէս ներս մտած էր:

Երիտասարդ ուսանողին համար շատ ծանր էր 1819 ի ձմեռը, քանզի կրկին հիւանդութեան մատնուեցաւ: Սակայն ազնիւ ընտա-

նիք մը անոր հոգածութիւնը յանձն առաւ
և բոլոր անհրաժեշտ ծախքերը վճարեց:

Այդ միջոցին օր մը երիտասարդ մը այ-
ցելեց իրեն, որ դուռնէ դուռ պտտելով օգնու-
թիւն կը խնդրէր: Ան ալ իրեն նման հիւան-
դութիւն կրած էր, սակայն առանց իրեն ու-
նեցած հոգածութիւնը վայելած ըլլալու եւ
տակաւին խիստ տկար ու անզօր կ'երևէր:
Մեր ուսանողը անոր փոքրիկ գրամական օգ-
նութիւն մը ընելէն վերջ տեսաւ թէ անոր
չապիկը շատ աղտոտ և հին էր ու առաջարկեց
որ իր շապիկներէն մէկը առնէր և անմիջապէս
փոխուէր: Աղքատ երիտասարդը շատ ուրա-
խացաւ, սակայն առարկեց անոր սենեակին
մէջ փոխուելու, ըսելով թէ վերջին օր շաբաթ-
ները ախոռներու մէջ գրչերած էր և իր վրայ
այլևայլ բնակիչներ ունէր: Ուստի ուրիշ
տեղ մտցուցին փոխուելու և վրայէն հանած
չապիկը անմիջապէս կրակը նետեցին: Քանի
որ անիկա ուրիշ սենեակի մը մէջ կը փոխուէր
երիտասարդ ուսանողը տեսաւ թէ անոր պա-
յուսակը պարապ էր և որոշեց զայն լեցնել:
Անոր մէջ դրաւ երկու լաւ շապիկ, գոյգ մը
կօշիկ, տաբատ մը, գլխարկ մը, երկու փող-
կապ և երկու դաշկինակ և քիչ մը գրամ
թուղթի մը մէջ փաթթուած որուն վրայ գրը-

ուած էր՝ «Աստուծոյ վստահ», Ան Անդրեան
մեջ կ'օգնէ»: Երբ աղքատ երիտասարդը կը
վերադառնայ, անոր կը յանձնէ իր պայուսակը
առանց բան մը իսկ ըսելու: Երիտասարդը իր
շնորհակալութիւնը յայտնելով կը հեռանայ:
Ուսանողը պատուհանէն կը նայի թէ արդեօք
անիկա պիտի նշմարէ՞ր իր պայուսակին լեց-
ուած ըլլալը, սակայն խեղճ երիտասարդը
այնքան ուրախացած էր իր ստացած օգնու-
թեան վրայ որ նոր բան մը չէր զգար, նաեւ
կ'աճապարէր հասնիլ այն նաւը որ զինք ու-
րիշ տեղ մը պիտի փոխադրէր: Ուսանող
երիտասարդը շատ երջանիկ էր այդ օրը որ
կարող եղած էր ուրիշի մը օգնուել:

Երեկոյին անոր բժիշկը կրկին գալով իր
ուրախութիւնը յայտնեց անոր ապաքինման
համար, սակայն կրկին թելադրեց որ զարնան
օդափոխութեան երթար բոլորովին աղէկնալու
համար: Բժիշկը չէր գիտեր թէ իր թելադրու-
թեամբ ինչ շփոթութեան կը մատնէր իր հի-
ւանդը: Ուսանողը կրկին սկսաւ խորհիլ՝ «Այս
ի՞նչ ըրի նորէն: Այն գրամը որ Աստուած իր
շնորհքովը ինծի տուած էր օդափոխութեան
համար զործածելու, բռնեցի ուրիշի տուի:
Արդեօք անիկա ի՞նչպէս պիտի գործածէ այդ
գրամը: Արդեօք շիտակ էր իմ ըրածս»: Յե-

տոյ Աստուծոյ զխմելով աղօթեց՝ «Ով Աստուծա՛ւ, դուն զիս քննէ և զիտցիր ու ներէ եթէ սխալ գործեցի: Դուն կարող ես իմ սխալներս շտկելու և պիտի շտկես»: Այս խօսքերով ու խորհուրդներով քնացաւ: Հետեւեալ առաւօտուն երբ արթնցաւ, իր մահճակալին քովի աթոռին վրայ հագուստեղէներու կոյտ մը տեսաւ, նաեւ գլխարկ մը, ճ շապիկ և զոյգ մը կօշիկ: Խորհեցաւ թէ երեկոյն մէկը զանոնք հոն թողուցած էր և քիչ վերջ տանելու պիտի դար: Տեղէն ելաւ, հաղուեցաւ և երբ մահիճը կը շտկէր, ծանր բան մը գետին ինկաւ: Ուսանողը նայեցաւ որ ծրար մըն էր և զայն բանալով իր տուած դրամին կրկին գումարը դրտաւ անոր մէջ: Երբ նախաճաշի գնաց բաց Սուրբ Գրքին մէջ գտաւ թուղթ մը որուն վերայ մէկը մատիտով գրած էր. «Աստուած Իրեններուն քննի սեղ կուսայ»:

Յաջորդ օրը ուսանող երիտասարդը ծածոնթ նկարիչի մը քով գործ մը ունէր: Անոր հանդիպած միջոցին տեսաւ թէ մասնաւոր ժողով մը իրեն կը նայէր և խորհեցաւ թէ նրկարիչը անպատճառ լուր ունէր իրեն պատահածէն և յանկարծ միտքը ինկաւ թէ իր Սուրբ Գրքին մէջի թուղթին վրայ գրուած մատիտով գիրը նկարիչին գիրն ըլլալու էր: Հար-

ցուց և հետեւեալը իմացաւ: Նկարիչը պատմեց. «Երէկ պարոն մը զիս կանչեց և ինծի հարցուց թէ արդեօք կը ճանչնայի՞ մէկը որ պիտի կրնար օգտուիլ իր մեռած տղուն հագուստներէն: Անոր ըսի՝ ճիշդ հիմա բժիշկ մը ինծի պատմեց թէ ուսանողի մը թելադրած էր օգտափոխութեան երթալ կը խորհիմ թէ յիշեալ ուսանողը պիտի կրնար օգտուիլ ձեր որդիին հագուստներէն»: Պրն ը ըսաւ. «Եթէ այդպէս է, անշուշտ այդ ուսանողը դրամի ալ պէտք պիտի ունենայ», և անմիջապէս ամբողջը միասին ծրարելով ինծի տուաւ: Գիշեր էր, լապտեր մը առնելով առանց յապաղելու քու սենեակդ եկայ, և քեզ քնացած գտնելով այն երկտողը գրեցի», Ամէն ինչ պարզուեցաւ և ուսանողը քանի մը օր վերջը ճամբայ ելաւ: Ստացած հագուստները կարծես թէ իր վրայ ձեւուած էին: Ժամանակ մը վերջը հագուստները զրկող պարոնը պատմեց նկարիչին թէ ինչպէս այն օրը անդիմադրելի մղում մը զգացած էր հագուստները նոյն օրը զրկելու:

Վերոյիշեալ զարմանալի միջադէպը այնքան ազդեց երիտասարդ ուսանողին որ անկա որոշեց երբէք չմերժել որևէ զիմուժ որ իրեն կ'ըլլար, որչափ ատեն որ դրամ ունե-

նար կամ կրնար իրմէ խնդրուածը որևէ կերպով ձեռք բերել: Անոր այս որոշումը սակայն մինչև Յունուար 1821 ին բաւական բարձրացուց իր պարտքերուն գումարը: Այդ պարագաներուն կրկին յաճախ հիւանդ էր և շատ անգամ մահուան վրայ կը խորհէր: Կերակուրի դրամը վճարելու ժամանակն ալ հասած էր, սակայն քանի մը ոսկիի պակաս մը կար: Աստուած զարմանալի կերպով լեցուց այդ պակասը: Անոր աչակերտներէն երկուքը իրենց ծնողքներէն եփուած պտուղ բերին իրեն շատ մը բարեներով: Երիտասարդ ուսանողը ծարաւ զգալով պտուղներէն հատ մը իր բերանը առաւ, և մեծապէս զարմացաւ երբ պտուղը խածնելու պահուն լեզուին վրայ ոսկի մը ինկաւ: Քաջալերուած ուրիշ քանի մը պտուղ ևս փորձեց և երեք անգամ այն բանը կրկնուեցաւ: Ծիշդ այդքան պէտք ունէր իր կերակուրի հաշիւը փակելու: Սակայն տակաւին կարգ մը ուրիշ պարտքեր ունէր գոր վճարելու անկարող էր:

Երեկոյ մը ազնիւ երեց մը անոր այցելուութեան գալով մեծ փափկանկատուութեամբ հարցուց թէ արդեօք պարտքեր ունէ՞ր: Ուսանողը պարզեց անոր իր վճակը: Վեց օր վերջը յիշեալ երէցին տունը հրաւիրուեցաւ որ զայն

իր սենեակը տանելով սեղանի մը առջև կայնեցուց և անոր վրայէն ծածկոց մը վերցնելով ոսկիներու դէզ մը ներկայացուց ըսելով թէ այդ ամէնը իրենն էր: Այսպէս կարող եղաւ ոչ թէ միայն պարտքը վճարել, այլ քիչ մըն ալ իրեն համար գործածել: Այդ իրիկունը իր հաշուետետրին մէջ գրեց. «Միայն ֆեզ աղիկ նայի, ու ֆու հոգոյոյ շաս գգուշութիւն ըրի, որպէսզի չըլլայ թէ այնքուդ տեսած բաները մոռնաս, և չըլլայ թէ կեանքիդ քոյր օրերուն մեզ ֆու արեւոյ եղևն, այլ զաննիք ֆու որդիներուդ և որդոյոյ որդիներուն սորվեցնես»: Բ Օրին. 4. 9:

Այսպիսի ոսկիներու տարափի մը չհանդիպեցաւ անիկա այլևս, սակայն պէտք ալ չունեցաւ, բայց իր Տէրոջն ու Աստուծոյն հաւատարմութիւնը միշտ իրեն հետ մնաց ու զինքը գործածեց իր փառքին համար:



ԴՌԻՆ ԳԻՏԵ՞Ս

Սիրելի փոքրիկ ընթերցող, դուն շատ բաներ սորվիլ սկսած ես և կ'ուզես որ շատ բաներ գիտնաս երբոր կը մեծնաս: Բայց որչափ շատ բաներ ալ սորվիս և գիտնաս, ատոնք շատ օգուտ չունին: Ամէնէն օգտակար բաները ամէնէն առաջ գիտնալու ես:

Դուն գիտե՞ս որ Աստուած ֆեղ կը սիրէ: «Վասնզի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, (անչուշտ քեզ ալ, քանի որ աշխարհի մարդոցմէ մէկն ես), մինչև իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ»: Յովհ. 3. 16:

Դուն գիտե՞ս որ Ան կը տեսնէ ֆեղ եւ ֆու բոլոր խորհուրդներդ եւ գործերդ: «Ով Տէր, զիս քննեցիր ու ճանչցար, դուն գիտես իմ նստիլս ու ելլելս, իմ խորհուրդներս հեռուանց կ'իմանաս»: Սաղմ. 139. 1-2:

Դուն գիտե՞ս որ մեղիկ վարձք մասն է: «Քանզի մեղքին վարձքը մահ է»: Հռովմ. 6. 23: «Ան որ Որդւոյն չհնազանդիր, անիկա կեանք պիտի չտեսնէ, հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ»: Յովհ. 3. 36:

Դուն գիտե՞ս որ Աստուած անկէ քան զաստուսակի պիտի բերէ: «Աստուծմէ վախցիր ու Անոր պատուիրանքները պահէ . . . քանզի Աստուած ամէն գործը, ամէն ծածուկ բաներու հետ, թէ բարին և թէ չարը դատաստանի պիտի բերէ»: Դիրք Ժողովողի 12. 13-14:

Դուն գիտե՞ս որ Յիսուս ֆեղի հաւատ անոր պիտի դուն Իրեւ հաւատ ապրիս: «Եւ ամէն նուն համար մեռաւ, որպէսզի կենդանի եւ զոյգները ալ իրենց անձերուն կենդանի չըլլան, հապա Անոր որ իրենց համար մեռաւ ու յաւրութիւն առաւ»: Բ Կորն. 5. 15:

Դուն գիտե՞ս որ միայն Աստուծոյ պատուիրանքները պահողներ երկինջ պիտի մտնեն: «Երանելի են անոնք որ Անոր պատուիրանքները կը կատարեն, որպէսզի իշխանութիւն ունենան կենաց ծառին վրայ և դռներէն ներս քաղաքը մտնեն»: Յայտ, 22, 14:

Դուն գիտե՞ս որ բոլոր անապաշխար մեղաւորներ պիտի կորսուին: «Բայց վախկոտներուն, ու անհաւատներուն և պիղծերուն ու մարդասպաններուն ու պոռնիկներուն և կախարդներուն ու կռապաշտներուն բաժինը կրակով ու ծծումբով վառած լիճին մէջ պիտի ըլլայ, որ է երկրորդ մահ»: Յայտ. 21. 8:

Արեւիլի փոքրիկ ընթերցող, ԴՈՒՆ ԴԻՏԵ՛Ս
այս բաները: Այս համարները ուշադրու-
թեամբ կարդա և անոնց վրայ խորհէ: Եթէ
հիմակուելնէ Յիսուսի գասս և սիրտդ Անոր
տասս, որչա՛փ լաւ բան մ'ըրած պիտի ըլլաս:
Ասիկա անմիջապէս կ'ընդունի քեզ: Աստ-
ուած, տուր աշխարհի արարիչը քու հայրդ
պէտի ըլլայ, Քրիստոս՝ քու Փրկիչդ, քու բա-
րեկամդ, քու հովիւդ, և քու առաջնորդդ
պիտի ըլլայ: Սուրբ Հոգին քեզի պիտի սոր-
վեցնէ ամէն ինչ որ քեզի պէտք է:

Աստուած պիտի լսէ քեզի երբ Իրեն կը
կանչես և պիտի պատասխանէ քու աղօթքիդ:
Այս տետրակին մէջ գրուած պատմութեան
վրայ մտածէ և տես թէ ինչպէս կ'օգնէ Աստ-
ուած բոլոր անոնց որ Իրեն կը կանչեն նեղու-
թեան ատեն: Ասիկա իրական պատմութիւն է
և շատեր կան որ ասոնց նման վկայութիւններ
ունին: Թող քու կեանքդ ալ այսպէս ըլլայ:
Դուն ալ կրնաս վայելիլ այս օրհնութիւնները:
Այս օրէն սկսէ դուն ալ Տէրոջ նուիրուիլ և Ա-
նոր հետեւիլ: Տէրը օրհնէ քեզ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0988890

1

1017

ՄԱՐ ԿՈՎ, ԱԷ

0000000

Ը 1. «ԽՕՍԵՑԷՔ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ» :
Գին, 1 դահեկան սուրբական :

Թիւ 2. «ՎԷՐՆԸՐ, ՅԻՍՈՒՈՒ ՄԷԿ ԱՇԱ-
ԿԵՐՏԸ» : Գին, 2 դահեկան սու-
րբական :

Թիւ 3. «ԱՍՏՈՒԾՈՅ ՎՍՏԱՀԷ, ԱՆ ՆԵ-
ՂՈՒԹԵԱՆ ՍԷՋ ԿՕԳՆԷ» : Գին,
1 դահեկան սուրբական :

Հասցի .—

ACTION CHRÉTIENNE EN ORIENT,
ALEP, SYRIE

